ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՋԱՓՆՅԱԿ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Հարգելի՛ աջափնյակցիներ,

Ձևավորված ավանդույթի համաձայն ժամանակն է ամփոփելու 2017 թվականին մեր վարչական շրջանում իրականացված աշխատանքների արդյունքները և նախանշելու հաջորդ տարվա անելիքները: Տարվա աշխատանքների մանրամասն հաշվետվությունը հաջորդող էջերին է, և դրանց ծավալը թույլ է տալիս եզրակացնել, որ անցնող տարին եղել է արդյունավետ ու ձեռքբերումներով հարուստ: Ուրախ եմ, արձանագրել, որ Աջափնյակը իր նորացված և բարեկարգ հանգստի գոտիներով դառնում է մայրաքաղաքի հաճելի հատվածներից մեկը, և ոչ միայն աջափնյակցին է այստեղ հաճույքով անցկացնում իր ազատ ժամանակն ու հանգիստը, այլև քաղաքի վարչական այլ շրջանների բնակիչները:
Մեր բոլորիս ջանքերով առաջիկա տարիներին պետք է ձգտենք պահպանել այս միտումը և անել ամեն ինչ, որպեսզի Աջափնյակը դառնա քաղաքի ամենախնամված, ամենահետաքրքիր ու աշխույժ հատվածներից մեկը՝ առաջարկելով կրթամշակութային, գիտատեխնիկական օջախների, մարզական և ժամանցային կենտրոնների՝ բոլորին գոհացնող ընտրություն:

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար

Արտավազդ Սարգսյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աջափնյակ վարչական շրջանում 2017թ. իրականացվել են փողոցների, մայթերի, բակերի ասֆալտապատման, ինչպես նաև ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

- Փողոցների և բակերի ասֆալտապատում՝ շուրջ **75000** քմ:
- Մայթերի և պուրակների սալիկապատում՝ **1150** քմ:
- Թեքահարթակների կառուցում՝ **20** հատ:

	Ասֆալտապատման աշխատանքներ	Սալիկապատման աշխատանքներ	
2015	96,738 քմ	1,100 քմ	2015
2016	79,000 քմ	1,210 քմ	2016
2017	75,000 քմ	1,150 քմ	2017

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

- Վերանորոգվել է 110 բազմաբնակարան շենքերի **145** շքամուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում:

Վերելակների նորոգում

- Նորոգվել և սպասարկվել է բազմաբնակարան շենքերի **47** վերելակ:

Տանիքների վերանորոգում

- **50** բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է **6000** քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիք:
- Իրականացվել են 169 բազմաբնակարան շենքերի **5319** քմ ընդհանուր մակերեսով թեք տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ: Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում:

14 բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է վթարային վիճակում գտնվող **16** պատշգամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

- Բնակիչների դիմումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար տրամադրվել է **3000** հատ ասբոհերցաքար:

Վերանորոգված շքամուտքեր



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

- Հիմնանորոգվել են **6 200 քմ** ընդհանուր մակերեսով բակային տարածքներ, որից **5050 քմ**-ը՝ կանաչապատ:
- Ստեղծվել է **8** խաղահրապարակ:
- Տեղադրվել է **6** մանկական խաղ և **42** մարզասարք:
- Ֆուչիկի 2-րդ նրբ. թիվ 102 դպրոցի հարևանությամբ շահագործման է հանձնվել **մինի ֆուտբոլի մեկ դաշտ**:
- **27** հասցեներում իրականացվել են նկարազարդման աշխատանքներ:

	Հիմնանորոգված ընդհանուր մակերեսով բակային տարածքները	Նկարազարդված բակային տարածքների քանակ	Տեղադրված համալիրների, մանկական խաղերի, մարզասարքերի քանակ
2015	**8655 քմ**	**23**	**95**
2016	**7100 քմ**	**25**	**55**
2017	**6200 քմ**	**27**	**56**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ

Կազմակերպվել է Աջափնյակ վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների **425** ծնողների այցելությունը զորամասեր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ

- «Արևամանուկ» ՀԿ-ի, «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀԲՀ-ի, «Լուսինե» կանանց ՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ իրականացվել են տարաբնույթ սոցիալական ծրագրեր:
- **19** ընտանիք ընդգրկվել է «Տնտեսական կայունացում» ծրագրում:
- Բնակվարձի, կոմունալ վարձավճարների, առողջապահության և կրթության համար սիրիահայ 54 ընտանիքի տրամադրվել է նյութական և ֆինանսական աջակցություն:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

541
ընտանիքի ցուցաբերվել է դրամական աջակցություն

637
ընտանիքի ցուցաբերվել է նյութական աջակցություն

98
շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից

78
սիրիահայ ընտանիք ընդգրկվել է տարբեր սոցիալական ծրագրերում

- Բազմազավակ **7** ընտանիքի տոնական և այլ առիթներով տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

- Սոցիալապես անապահով ընտանիքների 2-րդ և 3-րդ դասարանների շուրջ **300** երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ:

- Ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով **3450** ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ և **3409** երեխայի՝ ամանորյա նվեր-փաթեթներ:

- «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում **286** ընտանիքի հատկացվել է կենցաղային տեխնիկա:

- «Էքսկուրսիա սոցիալապես անապահով ընտանիքների համար Հայաստանի տեսարժան վայրերով» ծրագրի շրջանակում կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Գառնի-Գեղարդ պատմամշակութային համալիր՝ վարչական շրջանում բնակվող **40** տարեցի համար:

- Վարչական շրջանում հայտնաբերվել է անօթևան **9** քաղաքացի և տեղափոխվել անօթևանների կացարան:

- Վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանից օգտվող շահառուների համար Սուրբ Ծննդյան, Սուրբ Հարության, Խաղողօրհնեքի, Տարեցների օրվա առթիվ կազմակերպվել է տոնական ճաշկերույթ:

ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող զինծառայողներին այցելած ծնողների թիվ



Դրամական աջակցություն ստացած ընտանիքների թիվ



ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. զգալի աշխատանքներ են կատարվել կրթական ծրագրերի ոլորտում:

- 3 մանկապարտեզներում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:
- Նոր գույքով համալրելու ծրագրով տրամադրվել է **124** եռահարկ մահճակալ, **213** երկհարկանի մահճակալ, **91** մանկական զգեստապահարան, **291** մանկական սեղան, **574** մանկական աթոռ:
- Պարբերաբար կազմակերպվել են սպորտլանդիաներ, տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր, մրցույթներ, միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին:



Ապահովվել է **3416** երեխայի նախադպրոցական անվճար ուսուցում

Մասնակի վերանորոգված մանկապարտեզներ

2015	4
2016	2
2017	3

Մանկապարտեզներին հատկացված գույքի քանակ

286	2015
462	2016
1097	2017

- Կազմակերպվել են ժամանցային շոուներ և ուսուցողական ծրագրեր:
- Գործել են բակային ճամբարներ, կազմակերպվել է **110** երեխայի հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում:
- Երաժշտական և արվեստի դպրոցներում կազմակերպվել է **838** երեխայի արտադպրոցական կրթություն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Աջափնյակ վարչական շրջանում իրականացվել են բազմաթիվ սպորտային ծրագրեր:

- «Աջափնյակ» մանկապատանեկան համալիր մարզադպրոցում բասկետբոլ, հանդբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ մարզաձևերից գործում է **22** խումբ, ուր հաճախում է **280** երեխա:
- Վարչական շրջանի շախմատի դպրոցի **16** խմբերում սովորում է **278** սան:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԹԻՄԵՐՆ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ.

- ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցական-ների քաղաքային 26-րդ մարզական խաղերին,
- ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկությանը, որտեղ թիմերը գրավել են մրցանակային տեղեր,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության քաղաքային ռազմամարզական խաղերին, արժանացել Երևան քաղաքի հաղթողի կոչման,
- Մինչև 13 տարեկան աղջիկների և մինչև 15 և 17 տարեկան պատանիների հանդբոլի ՀՀ առաջնությունում մարզադպրոցի թիմերը գրավել են մրցանակային տեղեր,
- «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնին, որտեղ գրավել են երկրորդ տեղը,
- «Երևանյան ամառ 2017» ծրագրի շրջանակում «Թումո» ՏՏԿ-ում կազմակերպված միջոցառմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ.

- «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ» բաց առաջնություններ շախմատից և բասկետբոլից,
- Ինովացիոն խաղեր. «Արմենիա» ՀԲԿ-ին հարող զբոսայգուն կից մարզահրապարակում գտնվող վարժասարքերի վրա շարունակվում է իրականացվել «Սթրիթ ուորք աութ» մարզաձևի զարգացման և տարածման գործընթացը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

2017 թ. քաղաքային կանաչապատման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Աջափնյակ վարչական շրջանում:

- Սիլիկյան թաղամասում անցկացվել է նոր ոռոգման ցանց շուրջ **2** կմ երկարությամբ:
- Վերանորոգվել է **1790** գծմ երկարությամբ ոռոգման ցանց:
- Իրականացվել են փականների փոխարինման և խողովակների ներկման աշխատանքներ:
- Բակային տարածքներում ստեղծվել է **0.42** հա մակերեսով նոր կանաչ գոտի:
- Տնկվել է շուրջ **183000** ծաղիկ
- Տնկվել են **1260** ծառ և **1000** թուփ:
- Իրականացվել են շուրջ **1050** ծառի պահպանման և խնամքի աշխատանքներ:
- 2017թ. Աջափնյակ վարչական շրջանի ընդհանուր ծաղկային տարածքը կազմել է **1.3 հա**:

Վերանորոգված ոռոգման ցանցերի երկարությունը



Ստեղծված կանաչ տարածքների ընդհանուր մակերես

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. իրականացվել են էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի, կոյուղագծերի, ջրատար համակարգի վերանորոգման աշխատանքներ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

- Վերակառուցվել են Հասմիկի, Շահումյան 18 և Սիսակյան փողոցների ջրատարները:
- Վերանորոգվել են ջրագծի բազմաթիվ հանգույցներ, փականներ, կարգավորիչներ և խողովակներ:

ԿՈՅՈՒՂԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

- Ֆուչիկի փողոց 9 շենքում կառուցվել է կոյուղագիծը:
- Թիվ 168 դպրոցում կառուցվել է կոյուղագիծը:
- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տարածքում կառուցվել է կոյուղագիծը:
- Վարչական շրջանի ողջ տարածքում վերանորոգվել են բազմաթիվ կոյուղահորեր և խողովակներ:

ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄ

- Մեկնարկել են 16 թաղամասի 5 բազմաբնակարան շենքի շուրջ **600** բնակարանների գազիֆիկացման աշխատանքները,
- Վարչական շրջանի ողջ տարածքում ներկվել են գազատար խողովակները:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՈԳՈՒՄ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում՝

- նորերով են փոխարինվել թեքված և վթարային հենասյուներ,
- փոխարինվել և կարգավորվել են **12** բազմաբնակարան շենքերի սնող մալուխագծերը,
- վերանորոգվել են ենթակայաններ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017 թ. իրականացվել են արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ:

- Բարեկարգված **10** բակային տարածքներում անցկացվել է արտաքին լուսավորության նոր ցանց:
- **5430** գծմ ընդհանուր երկարությամբ **134** լուսակետով արտաքին լուսավորության ցանց է անցկացվել ինչպես բակային տարածքներում, այնպես էլ միջբակային ճանապարհներին և փողոցներում,
- Ֆուտբոլի մեկ փոքր նորակառույց դաշտ ապահովվել է արտաքին լուսավորությամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. վարչական շրջանն ակտիվ աշխատանք է իրականացրել միջազգային համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

ՓՈԽԱՅՑԵՐ «ԱՋԱՓՆՅԱԿ-ՇՈՒՇԻ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի պատվիրակությունը Շուշիի վարչակազմի հետ վավերացրած համագործակցության հուշագրի շրջանակում տարվա ընթացքում աշխատանքային այցերով եղել է Շուշիում, կազմակերպվել են մասնագիտական փոխայցեր, իրականացվել տարաբնույթ ծրագրեր:

ԵՐԵՎԱՆ-ԹԲԻԼԻՍԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի պատվիրակությունը եղել է Թբիլիսիում և մասնակցել Թբիլիսոբայի տոնակատարությանը:

Մենք
հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-008
ajapnyak@yerevan.am

www.yerevan.am